թերությունններ, որոնք նույնպես սահմանված ժամկետում չէին շտկել: Ինչպես նաև, «ՍՈՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով «ՍՈՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն ունի 1 595 328 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություններ: Հանձնաժողովի որոշմամբ, սույն անհամապատասխանության մասով նույնպես առաջարկվեց մասնակցին ծանուցումը ստանալուց հետո 3 /երեք/ աշխատանքային օրվա ընթացքում շտկել կամ մարել ժամկետանց պարտավորությունը, իսկ դրա մասին համապատասխան հավաստումը՝ տրված հարկային մարմնի կողմից ներկայացնել փաստաթղթային եղանակով, որը չներկայացվելու արդյունքում որոշում կայացված վերջինիս տվյալները ներկայացնել Լիազորված մարմնին:

1.2 30.01.2019թ. նիստի ժամանակ, հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները /համակարգում գնահատման մասով կատարվել են համապատասխան գործողություններ/ հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/13» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի շրջանակներում 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակիցներ այն չափաբաժինների մասով, որոնցում նրանք ճանաչվել էին 1-ին տեղ զբաղեցրած, իսկ «ՍՈՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հայտը մերժելու արդյունքում ըստ գնային առաջարկների հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներից «Էլիտ ֆուդ» ՍՊԸ-ին Eauction համակարգի միջոցով առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/13» ծածկագրով ընթացակարգի հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/13» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

(Գ. Վարդանյան)

2.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/13» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

2.2 Հանձնաժողովը որոշեց հայտարարել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/13» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի արդյունքները և հաստատել կնքվելիք պայմանագրի մասին հայտարարության տեքստը: Հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**Գնահատող(ԳԱՊ)** Հ. Մելիքյան

**Գնահատող** Ա. Մարգարյան

**Գնահատող** Վ. Ասատրյան

**Գնահատող** Ս. Պետրոսյան

**Հանձնաժողովի քարտուղար** Գ. Վարդանյան